

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐՆ ԴԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ

Սահմանադրական օրինականության, սահմանադրական նորմերի անմիջական գործողության ապահովման և սահմանադրականության ձևավորման ոլորտում վճռական դերակատարություն ունեն սահմանադրական դատարանները: Սահմանադրությունը, առանց սահմանադրական դատարանի, *lex imperfecta* ակտ է: Սահմանադրությունը *lex perfecta* է միայն այն ժամանակ, երբ սահմանադրական դատարանը կարող է օրենքները ճանաչել հակասահմանադրական¹:

ՀՀ սահմանադրական դատարանը միայն ակտիվ դերակատարությամբ կարող է ապահովել Սահմանադրության գերակայության սկզբունքը: Սահմանադրական դատարանի որոշումներն ուղղորդող նշանակություն ունեն երկրում իրավական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում:

Հասարակական կյանքում սահմանադրական դատարանի գործառական դերակատարությունն առավել ընդհանրական ձևով դրսևորվում է դատական սահմանադրականության ձևավորման ոլորտում: Այս կապակցությամբ Ն. Բոնդարը կարևորում է հետևյալ հանգամանքները:

Առաջին՝ սահմանադրական դատարանի որոշումները դատական սահմանադրականության, հետևաբար նաև սահմանադրականության ողջ համակարգի ձևավորման նորմատիվ-իրավական հիմքն են (դատական սահմանադրականության նորմատիվ-իրավական բաղադրատարր):

Երկրորդ՝ սահմանադրական արդարադատությունը և նրա որոշումները սահմանադրական հայեցակարգի զարգացման կարևոր աղբյուր են (դատական սահմանադրականության գիտական-տեսական բաղադրատարր):

Երրորդ՝ սահմանադրական դատարանը սահմանադրական գաղափարախոսության շարժիչ ուժն է, նոր սահմանադրական մշակույթի, սահմանադրական աշխարհայացքի ձևավորողը (դատական սահմանադրականության գաղափարախոսական բաղադրատարր):

Չորրորդ՝ դատական սահմանադրականությունը սահմանադրաիրավական պրակտիկայի նյութականացումն է, սահմանադրական գերակա-

¹ Տե՛ս «Генеральный доклад XIV Конгресса Конференции европейских конституционных судов (Вильнюс, 3-6 июня 2008)» // «Конституционное правосудие». «Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии». Ер., 2008, № 2-3, էջ 110-111:

յության իրական արտացոլումը կյանքում (դատական սահմանադրականության նյութական բաղադրատարր)²:

Սույն հոդվածում կքննարկենք հանրային կյանքում ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարության, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների բնույթի, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների հարաբերական կայունության և փոփոխման ընթացակարգերի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության վրա ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ազդեցության որոշ հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն ընդհանրապես դատական քաղաքականության ձևավորման համար:

ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարությունը հանրային կյանքում: ՀՀ սահմանադրական դատարանը, լինելով դատական սահմանադրականություն ձևավորող հիմնական մարմին և որոշելով պետական այս կամ այն իրավական նախաձեռնության սահմանադրականությունը, հանրային կյանքում ձեռք է բերում բացառիկ քաղաքական դերակատարություն: Պառլամենտը դադարում է լինել օրենքների միակ «տիրակալը», քանի որ նրա կամքը ստորադաս է Սահմանադրությանը, իսկ օրենքների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է սահմանադրական դատարանը³:

ՀՀ սահմանադրական դատարանը լուծում է հանրային-իրավական կարևորության այնպիսի գործեր, որոնք անմիջականորեն կապված են ՀՀ Սահմանադրության նորմերի մեկնաբանման ու կիրառման, իրավական, քաղաքական անվտանգության, հանրային իշխանության անընդհատության (հաջողոթյանության), իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրենց սահմանադրական գործառույթների անվերապահ կատարման, ինչպես նաև օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմանադրականության որոշման հետ (ՀՀ սահմանադրական դատարանի 25. 02. 2011 թ. ՍԴՈ-943 որոշում, կետ 8): ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքական դերակատարությունը դրսևորվում է մարդու իրավունքների պաշտպանության, սահմանադրական հավասարակշռման ապահովման, սահմանադրական մշակույթի և սահմանադրաիրավական հայեցակարգի ձևավորման ոլորտներում, ինչի շնորհիվ սահմանադրական դատարանի քաղաքականությունը ստանում է հանրային բնույթ:

ՀՀ սահմանադրական դատարանի հանրային քաղաքականությունը կարող է փոխել օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների կողմից այս կամ այն ոլորտում իրականացվող գործունեության ուղղությունները, առաջնահերթությունները և, առհասարակ, դրա ողջ գաղափարախոսական հենքը: Ասվածը նշանակում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր կարգավիճակի շնորհիվ ունակ է ազդելու իրավական քաղաքականության զարգացման ուղղությունների վրա, ընդհուպ սահմանել այդ քաղաքականության իրականացման կառուցակարգերը: Օրինակ՝ վարչական դատավարության ոլորտում դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ ՀՀ

² Տե՛ս **Бондарь Н. С.** Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. М., 2011, էջ 108:

³ Տե՛ս **Медушевский А. Н.** Сравнительное конституционное право и политические институты. Курс лекций. М., 2002, էջ 462:

սահմանադրական դատարանի հետևողական քաղաքականության շնորհիվ օրենսդիր մարմինը հիմնադրեց ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականությունը հաճախ ուղղորդում է նաև պետական իշխանության այլ մարմինների գործունեությունը: Այդպիսի օրինակ է ՀՀ սահմանադրական դատարանի 18. 10. 2006 թ. ՍԴՈ-652 որոշումը. «Վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատման առնչությամբ նշում է, որ տվյալ դեպքում քաղաքացու սահմանադրական իրավունքի չապահովման պատճառով ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության խնդրով է պայմանավորված, այլ օրենսդրական նորմերի անհստակության և իրավակիրառական պրակտիկայի արդյունք է, ուստի նպատակահարմար է համարում սույն գործով իր որոշման պատճառաբանական մասի վրա հրավիրել **ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի ուշադրությունը**՝ դիմող կողմի սահմանադրական իրավունքի օրենքով սահմանված կարգով իրացումն ապահովելու նպատակով» (ընդգծ. իմն է - Ա. Ղ.):

Ինչպես նկատում ենք, ՀՀ սահմանադրական դատարանը կոչ է անում ՀՀ գլխավոր դատախազությանը և ՀՀ դատարանների նախագահների խորհրդին համապատասխան պրակտիկական ներդաշնակեցնել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմանը:

Հանրային կյանքում ՀՀ սահմանադրական դատարանի ազդեցության սահմաններն ուղղակիորեն կախված են սահմանադրական դատարանի և այլ դատարանների փոխհարաբերակցության մոդելից: Սահմանադրական և գերագույն դատարանների հակամարտությունը հատուկ է կենտրոնացված սահմանադրական արդարադատության համակարգերին, որտեղ սահմանադրական մասնագիտացված դատարանը, չհանդիսանալով ընդհանուր իրավասության դատական համակարգի մաս, մեկնաբանում է Սահմանադրության անորոշ նորմերը: Սահմանադրական արդարադատության մարմինների մեկնաբանությունները վերաբերում են իրավունքի բոլոր ճյուղերին, ինչը դիտվում է որպես «սեփական օրենքները» մեկնաբանելու ընդհանուր իրավասության դատարանների ավանդական գործունեության դեմ ոտնձգություն⁴:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից դատական իրավակիրառ պրակտիկայի գնահատման իրավաչափության վերաբերյալ իրավագիտության մեջ և գործնականում արտահայտվում են իրարամերժ կարծիքներ: Բանն այն է, որ մի կողմից ՀՀ Սահմանադրության 100 հոդվածում սպառնիչ սահմանված է, թե ՀՀ սահմանադրական դատարանը ո՛ր ակտերի սահմանադրականությունը կարող է որոշել, իսկ այդ ցանկում դատական ակտերը նախատեսված չեն, մյուս կողմից՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ սահմանադրական դատարանը այս կամ այն օրենքի սահմանադրականությունը որոշելիս գնահատում է նաև իրավակիրառ պրակտիկան: Արդյոք այս դեպ-

⁴ Տե՛ս «Ուսումնասիրություն անհատական սահմանադրական դիմումների վերաբերյալ»: Ընդունվել է Վեներտիկի հանձնաժողովի 85-րդ լիազումար նիստում, Վեներտիկ, 17-18 դեկտեմբերի, 2010, էջ 75:

քում ՀՀ սահմանադրական դատարանը չի⁵ վերածվում չորրորդ ատյանի: Ա. Պողոսյանը նշում է, որ իրավական նորմը իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանության շրջանակներում չի կարող ճանաչվել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, քանի որ իրավակիրառական պրակտիկան երբեմն կարող է ձևավորվել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող իրավական նորմի սխալ մեկնաբանության արդյունքում: Տվյալ պարագայում իրականում ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող իրավական նորմը չի կարող ճանաչվել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր միայն սխալ իրավակիրառական պրակտիկայի պատճառով. իրավական նորմը պարզապես կան համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, կան հակասում դրան՝ անկախ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանության շրջանակներից⁵: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 25. 02. 2011 թ. ՍԴՈ-943 որոշման 8-րդ կետում հստակ սահմանել է. «Իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 և 63 հոդվածների պահանջներից, սահմանադրական դատարանը գնահատում է նաև արդարադատական (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) պրակտիկան, բացահայտելով նաև կիրառվող (այդ թվում՝ դատական պրակտիկայում) օրենքների (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակությունը՝ զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը»:

Համաձայնելով ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշման հետ՝ գտնում ենք, որ նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանի գործառական պարտականության մեջ է մտնում նաև վիճարկվող նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը գնահատելը: Նշված մոտեցումը պայմանավորված է մարդու՝ սահմանադրական դատական պաշտպանության իրավունքի իրատեսական լինելու պահանջով: Ասվածը հատկապես կարևորվում է դատական այն համակարգերում, որտեղ բարձրագույն դատական ատյանների կողմից՝ օրենքներին տրված մեկնաբանությունը պաշտոնապես պարտադիր է համանման գործերով այլ դատարանների համար: Այսպես, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող օրենքը ՀՀ վճարելի դատարանի կողմից սահմանադրական արժեքների հետ անհամատեղելի մեկնաբանելու դեպքում այդ օրենքի միատեսակ ընկալումը և կիրառումը կխաթարի սահմանադրական օրինականությունը: Նման դեպքում, եթե նույնիսկ օրենքն ինքնին չի խախտում սահմանադրական արժեհամակարգը, միևնույն է, սահմանադրական դատարանի գործառույթն է, վերլուծելով օրենքին տրված դատական նորմատիվ մեկնաբանության սահմանադրականությունը, վերականգնել խաթարված սահմանադրական օրինականությունը: Այլ մոտեցման պարագայում կստացվի, որ ընդունվել է ինքնին ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող օրենք, սակայն ՀՀ վճարելի դատարանի կողմից օրենքին

⁵ Տե՛ս Ա. Պողոսյան, ՀՀ դատարանակազմության որոշ հիմնախնդիրների մասին // Օրենք և իրականություն, 2011, թիվ 3, էջ 13:

տրված նորմատիվ մեկնաբանությունը հակասահմանադրական է, իսկ մարդը զրկված է օրենքի՝ իրավակիրառ պրակտիկայում հակասահմանադրական մեկնաբանությունից պաշտպանվելու արդյունավետ միջոցից:

Ասվածը հիմնավորվում է նաև սահմանադրական իրավունքի զարգացման ներկայիս միտումներով: Ա. Շայոն որպես սահմանադրական արդարադատության զարգացման միտում մատնանշում է այն, որ եվրոպական մի շարք երկրներում սահմանադրական դատավարությունն իրենից ներկայացնում է սահմանադրական իրավունքի ոլորտում յուրահատուկ վճռաբեկ վարույթ, այն մեծ մասամբ վերաբերում է ոչ թե օրենսդրությանը, այլ սովորական դատավարություններին և գործնականում սահմանադրականությունը տարածում է քրեական իրավունքի, մասնավոր իրավունքի և պետական կառավարման ոլորտների նկատմամբ⁶: Տեսության մեջ հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մտքերի, թե «սահմանադրական դատարանները ստուգում են նորմատիվ ակտերի սահմանադրականությունը դատական պրակտիկայում դրանց տրվող մեկնաբանության իմաստով»⁷, կամ, թե «ՌԴ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական փաստացի կարգավիճակը ինչ-որ իմաստով տարբերվում է իր սահմանադրաիրավական մոդելից, քանի որ ՌԴ սահմանադրական դատարանը փաստացի վերածվում է սահմանադրական իրավունքի ոլորտում բարձրագույն վճռաբեկ դատարանի»⁸:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականության տիրույթն ընդգրկում է ոչ միայն օրինաստեղծ գործունեության ոլորտը, այլ նաև հանրային իրավակիրառ պրակտիկան, ինչը հանրային կյանքի սահմանադրականությունը դարձնում է առավել պաշտպանված, իսկ մարդու սահմանադրական դատական պաշտպանության իրավունքը՝ իրատեսական:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների բնույթը: ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրության 100 հոդվածի 1-ից 4-րդ և 9-րդ կետերում թվարկված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-ից 8-րդ կետերում թվարկված հարցերի վերաբերյալ՝ եզրակացություններ: Արդյոք սահմանադրական դատարանի եզրակացությունները կարող են դատական քաղաքականության ամրագրման միջոց լինել: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացությունների իրավաբանական բնույթը: Տեսության մեջ նշվում է, որ, ի տարբերություն որոշումների, ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացություններն ունեն կողմնորոշիչ բնույթ: Դրանք դառնում են կողմնորոշիչ՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 5-8-րդ կետերում նշված հարցերով որոշում կայացնելու համար: Սակայն կարևոր է այն հանգամանքը, որ դատարանի եզրակացությունը ոչ թե խորհրդատվական, այլ կարծես պարտադիր նշանակություն ունի, որովհետև օրենսդիր մարմինը դատարանի բացասական

⁶ Տե՛ս **Шайо А.** Самоограничение власти. Краткий курс конституционализма. М., 2001, էջ 243:

⁷ "Конституционный судебный процесс". Учебник для вузов. М., 2003, с. 235.

⁸ "Самостоятельность и независимость судебной власти Российской Федерации". М., 2006, с. 143.

եզրակացության դեպքում դրան հակառակ որոշում ընդունել չի կարող⁹: Եթե սահմանադրական դատարանի եզրակացությունները պարտադիր նշանակություն չունենան, ապա չեն բավարարի դատական քաղաքականությունը ամրագրող ակտերին ներկայացվող պարտադիրության վերաբերյալ պահանջը, ուստի դրանք սահմանադրական դատական քաղաքականության ամրագրման միջոց չեն հանդիսանա:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների հասկացության, իրավական համակարգում և իրավաբանության զարգացման ոլորտում դրանց դերի որոշակիացման հարցում առանձնահատուկ կարևորություն է ստացել ՀՀ սահմանադրական դատարանի 25. 02. 2011 թ. ՍԴՈ-943 հայտնի որոշումը, որով լուծվել են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտության և սահմանադրական պրակտիկայում երկար տարիներ վեճերի տեղիք տվող մի շարք հարցադրումներ: Նախ, նշված որոշմամբ տրվել է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հետևյալ բնորոշումը.

«ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայացնում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ վարքագծի կանոններ: Դրանով են պայմանավորված սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվ բնույթը, ինչպես նաև այդ ակտերին անմիջականորեն հաջորդող իրավական առանձնահատուկ հետևանքները՝ կապված հակասահմանադրական ճանաչված իրավանորմի իրավաբանական ուժը կորցնելու, սահմանադրական նորմերի մեկնաբանման (իրավական դիրքորոշումների) շրջանակներում իրավանորմը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, ինչպես նաև սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրներին լուծում ու փաստերին գնահատական տալու հետ (ՀՀ Սահմ. 100 հոդվածի 3-9-րդ կետեր)»:

Նշված բնորոշումից հետևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը պաշտոնական փաստաթուղթ է, որով սահմանվում են նորմատիվ կանոններ, որոնք իրավաբանական տեսակետից անվիճարկելի են (վերանայման ոչ ենթակա), ենթակա են կատարման առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել): ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների բնույթի, դրանց պարտադիրության վերաբերյալ ՀՀ օրենսդրական այլ ակտերում նույնպես առկա են որոշակի իրավակարգավորումներ: Այսպես, «Իրավական ակտերի մա-

⁹ Տե՛ս **Գ. Հարությունյան, Վ. Ստեփանյան, Վ. Հովհաննիսյան**, Սահմանադրական վերահսկողություն. ուսումնաստանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր., 1997, էջ 44:

սին» ՀՀ օրենքի 6 հոդվածում ամրագրված է, որ ՀՀ սահմանադրական դատարանը նորմատիվ-իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունի: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասում ամրագրված է, որ ՀՀ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում¹⁰:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվության քննարկումն ուղղակիորեն կապված է ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավաբանական բնույթի հետ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով հստակ բացահայտված չէ «իրավական դիրքորոշում» եզրույթի բովանդակությունը, իսկ դրա իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած դերի և նորմաստեղծ նշանակության խնդիրներն օրենքով դեռևս լիարժեք չեն կարգավորվել: ՀՀ սահմանադրական դատարանն իր ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում կարևորել է իրավակիրառող սուբյեկտների կողմից սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր հաշվի առնելու հանգամանքը՝ որպես նաև սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում հաստատված կանոն: Այնուամենայնիվ, որպես հանրային-իրավական հարաբերությունների կարգավորման միջոց, իրավական դիրքորոշման ինստիտուտը ներդրված է ՀՀ իրավահամակարգում, մասնավորապես՝ վարչական արդարադատության բնագավառում (վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մաս) և կիրառվում է ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում հատկապես անհատական դիմումի ինստիտուտի ներդրման շնորհիվ (01. 07. 2006 թ.): Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավական բնույթը որոշ չափով հստակեցվել է նաև ՀՀ Ազգային ժողովի որոշումներում, երբ միջազգային պայմանագրերը վավերացվում են՝ ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի կոնկրետ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 25. 02. 2011 թ. ՍԴՈ-943 որոշում, կետ 9):

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ իրավական դիրքորոշման հասկացության վերաբերյալ դրսևորվել են տարբեր մոտեցումներ: Սահմանադրական դատարանի վերջնական որոշումներում առկա իրա-

¹⁰ Եթե համեմատում ենք ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի ակտերի նորմատիվության վերաբերյալ իրավական կարգավորումները («Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 61 հոդված, ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդված), ապա նկատում ենք, որ այս երկու բարձր դատարանների որոշումների նորմատիվության իրավական կարգավորումը համակարգային տեսանկյունից տարբերվում է: Տեսության մեջ նշվում է, որ եթե ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիրությունը սահմանվում է ընդհանուր-իրավական իրավամտածողությամբ բնորոշ եղանակով (ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդված), ապա սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրությունը սահմանվել է դասական նորմատիվ-իրավական ակտին բնորոշ եզրաբանությամբ ու մեթոդաբանությամբ, այլ կերպ՝ ռոմանագերմանական իրավաընտանիքին բնորոշ ձևով (տե՛ս **Ջ. Մոլիտերնո, Ռ. Մելիքյան, Դ. Մելքոնյան**, Իրավաբանական գիր և վերլուծություն, 3-րդ հրատարակություն, Եր., 2010, էջ 125-126):

վական դիրքորոշում ասելով մի դեպքում հասկացվում է սահմանադրաիրավական նորմերի և սկզբունքների մեկնաբանություն¹¹, մեկ այլ դեպքում՝ դատարանի եզրակացությունների և փաստարկների համակարգ¹², երրորդ դեպքում՝ դատարանի կողմից դատական որոշման գիտաիրավաբանական հիմքը կազմող փաստարկների և եզրակացությունների վերլուծության արդյունք¹³: Ինչպես նկատում ենք, նշված բնորոշումներն ունեն ընդհանրություններ: Սեր կարծիքով առավել ամբողջական է իրավական դիրքորոշման՝ Ն. Վ. Վիտրուկի բնորոշումը, ըստ որի՝ իրավական դիրքորոշումը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության և ճյուղային օրենքների սահմանադրական նշանակության մեկնաբանության արդյունքում ձևավորված իրավական եզրակացություններն ու պատկերացումներն են, որոնք սահմանադրաիրավական որոշակի իրավիճակներում վերացնում են անորոշությունը և վերջնական որոշում կայացնելու հիմք են հանդիսանում¹⁴:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ վիճելի են սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավաբանական ուժի, սահմանադրական դատարանի որոշումների կառուցվածքում իրավական դիրքորոշումների տեղի հետ կապված հարցերը: Այս խնդիրների վերաբերյալ կա է տեսական հարուստ գրականություն¹⁵, սակայն, նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-652, ՍԴՈ-701, ՍԴՈ-833) անդրադարձել է իրավական դիրքորոշումների իրավաբանական բնույթին: ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ հարցերն առավել համակարգային լուծում են ստացել 23. 02. 2011 թ. որոշմամբ: Ըստ այդմ՝

¹¹ Տե՛ս **Лазарев Л. В.** Конституционный Суд России и развитие конституционного права // «Журнал российского права», 1997, № 11, էջ 9:

¹² Տե՛ս «Конституционный судебный процесс». М., 2003, էջ 177:

¹³ Տե՛ս **Анишина В.** Правовые позиции Конституционного Суда России // «Российская юстиция», 2000, №7, էջ 11-12:

¹⁴ Տե՛ս **Витрук Н. В.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации: понятие, природа, юридическая сила и значение // «Конституционное право: восточноевропейское обозрение», 1999, № 3, էջ 95:

¹⁵ Տե՛ս **Гаджиев Г. А.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации // «Северо-Кавказский юридический вестник», 1997, № 3, էջ 3-15, **Гаджиев Г. А.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации как источник конституционного права // «Конституционное право: восточноевропейское обозрение», 1999, № 3, էջ 81-85, **Кряжков В. А., Лазарев Л. В.** Конституционная юстиция в Российской Федерации. М., 1998, էջ 246-249, **Кряжкова О. Н.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации: теоретические основы и практика реализации судами России. М., 2006, **Захаров В. В.** Решения Конституционного Суда Российской Федерации как источник конституционного права. М., 2006, **Бирюкова Л. Г.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации как источник права: вопросы теории и практики. Дисс. ... канд. юрид. наук. Казань, 2004, **Романова О. В.** К вопросу о понятии и правовой природе правовых позиций Конституционного Суда РФ // «Государство и право», 2001, № 7, էջ 84-87, **Бриксов В.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации как критерии конституционности объектов контроля // «Конституционное право: восточноевропейское обозрение», 2002, № 3, էջ 188-193:

ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝

1. անմիջականորեն բխում են սահմանադրական դատարանի լիազորություններից, հետևաբար, կրում են պաշտոնական բնույթ, հանդիսանում են սահմանադրական իրավունքի կարևոր աղբյուր՝ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ (նորմաստեղծ) գործունեության համար,

2. ունեն կոնկրետ իրավական հետևանք, հասցեագրված են ինչպես տվյալ գործով կոնկրետ, այնպես էլ հանրային-իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին (համընդգրկում են),

3. ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, կարող են փոփոխվել միայն սահմանադրական դատարանի որոշումներով,

4. կոչված են ՀՀ իրավահամակարգում և իրավակիրառական պրակտիկայում նպաստելու իրավական անորոշության վերացմանը, դրվում են իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմքում, ունեն նախադեպային բնույթ, մինչև վեճի առարկա հարաբերության նորմատիվ կարգավորումը, որոշ դեպքերում նաև իրավակարգավորման ժամանակավոր միջոց են,

5. կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու, նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ,

6. կարող են արտահայտվել ինչպես գործով ըստ էության կայացված, այնպես էլ գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներով:

Ինչ վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների հրապարակմանը, ապա օրենսդրությամբ սահմանված է, որ որոշումներն ու եզրակացությունները հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև սահմանադրական դատարանի տեղեկագրում: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները եռօրյա ժամկետում տեղադրվում են նաև ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական ինտերնետ կայքում:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն օժտված են գիտատեսական բնույթով: Խորհրդային ժամանակաշրջանում Սահմանադրության գիտական մեկնաբանությունը չէր արժևորվում, այն էական ազդեցություն չունեի նաև իրավական պրակտիկայում¹⁶: Սակայն արդի ժամանակաշրջանում հանրային կյանքում ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարության և սահմանադրաիրավական կարգավիճակի էական փոփոխության պայմաններում վերաիմաստավորվել է նաև սահմանադրական դատարանի կողմից ձևավորվող իրավագիտության դերն ու նշանակությունը: Տ. Պոյախինան իրավացիորեն նշում է, որ սահմանադրական

¹⁶ Стéв Басангов Д. А. Доктринальное конституционное толкование в деятельности Конституционного Суда РФ. Дисс. ... канд. юрид. наук. М., 2004, էջ 37:

դատարանի իրավական դիրքորոշումները սահմանադրաիրավական գիտության տեսակ են, իրավունքի աղբյուր են¹⁷: Նոր սահմանադրական արժեքների առկայությունը բարձրացնում է գիտության՝ որպես այդ արժեքների ներմուծման, վերհանման, արդիականացման գործընթացն ապահովող հիմնական գործոնի դերակատարությունը: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները համարվում են տեսական և պրակտիկ գիտելիքների ամրագրման ձև:

Հ. Խաչատրյանը նշում էր, որ ՀՀ սահմանադրական դատարանի կազմում անհրաժեշտ է ընդգրկել երկարամյա աշխատանքային փորձ ունեցող իրավաբան - գիտնականների, քանի որ օրենքների և այլ իրավական ակտերի՝ Սահմանադրության հետ համադրումը զուտ մեխանիկական գործընթաց չէ, որը կոչված է պատասխանելու մեկ հարցի՝ տվյալ ակտը համապատասխանում կամ չի համապատասխանում Հիմնական օրենքին¹⁸: Սահմանադրական դատարանի՝ որպես մասնագիտական դատարանի բնույթով է պայմանավորված դատական կազմի հատուկ որակավորումը: Սահմանադրական դատավարությունը համակարգային խոր վերլուծական հմտություններ և ստեղծագործական ունակություններ պահանջող գործունեություն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածով սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճանի առկայությունը համարվում է սահմանադրական դատարանի անդամի նշանակման ոչ պարտադիր պայման: ՀՀ սահմանադրական դատարանի անդամների մեծ մասն իրավունքի այս կամ այն ոլորտի ճանաչված մասնագետներ են, ունեն գիտական աստիճաններ: Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանի ինը անդամներից երեքը իրավագիտության դոկտոր են, երեքը՝ իրավագիտության թեկնածու: Իրավաբան-գիտնականների ներգրավվածությունը սահմանադրական արդարադատության գործընթացում ուղղակիորեն նպաստում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների որակի բարձրացմանը, իրավական նորմերի մեկնաբանման տարաբնույթ մեթոդների կիրառմանը, գիտական հայեցակարգերի նորմատիվացմանը:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների հարաբերական կայունությունը և փոփոխման ընթացակարգը: Ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն իրավաբանական տեսակետից անվիճարկելի են (վերանայման ոչ ենթակա): Սակայն տեսության մեջ մշտապես կարծիքներ են հնչում սահմանադրական դատարանի որոշումների վերանայման կառուցակարգերի ներդրման մասին: Այսպես, Ն. Այվազյանի կարծիքով, նպատակահարմար է ՀՀ Ազգային ժողովին իրավունք վերապահել անհրաժեշտության դեպքում վերանայելու սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցով հակասահմանադրական են ճանաչվել քաղաքացիների անձնական, սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավունքների, ինչպես նաև պետության ներքին և արտա-

¹⁷ Տե՛ս **Пряхина Т. М.** Конституционная доктрина Российской Федерации. М., 2006, էջ 56:

¹⁸ Տե՛ս **Հ. Խաչատրյան**, Սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական դատարան, Եր., 1993, էջ 20:

քին կյանքի առավել կարևոր հիմնախնդիրներին վերաբերող օրենքները կամ դրանց առանձին նորմեր¹⁹: Կարծում ենք, որ ՀՀ Ազգային ժողովին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները վերանայելու իրավասություն տալու առաջարկը հակասում է սահմանադրական արդարադատության և սահմանադրական պատասխանատվության բուն էությանը: ՀՀ սահմանադրական դատարանը կոչված է լուծելու ՀՀ Ազգային ժողովի ակտերի սահմանադրականության հարցը, սահմանադրական դատավարությունում ՀՀ Ազգային ժողովը հանդես է գալիս որպես պատասխանող կողմ, ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Ազգային ժողովի ընդունած օրենքը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելով, նրան ենթարկում է սահմանադրական պատասխանատվության: Մինչդեռ նշված հեղինակն առաջարկում է դատավարության պատասխանող կողմին իրավունք վերապահել վերանայելու իրեն սահմանադրական պատասխանատվության ենթարկած դատարանի որոշումը:

Սահմանադրական դատարանի որոշումների վերանայման հարցը հիմնականում բարձրացվում է սահմանադրական դատարանի քաղաքականությանը հավանություն չտվող այս կամ այն պետական կառույցին կից գործող գիտական հիմնարկների ներկայացուցիչների կողմից: Օրինակ՝ քրեական դատավարության ոլորտում ՌԴ սահմանադրական դատարանի իրականացրած հանրային դատական քաղաքականությունը, որով փոփոխվեց 1961 թ. ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի գաղափարախոսությունը և քրեական դատավարություն ներմուծվեցին ազատական – իրավական արժեքներ, առաջ բերեց ոչ միայն իրավապահ մարմինների դժգոհությունը և հակազդեցությունը, այլև արժանացավ դրանց կից գործող գիտական հիմնարկների գիտաշխատողների քննադատությանը: Հաճախ դատավարագետները սահմանադրական դատարանի որոշումները դիտարկում էին որպես սահմանադրաիրավական նորմի սխալ ընկալման և մեկնաբանման արդյունք, ուստի այդ սխալներն ուղղելու նպատակով առաջարկում էին օրենսդրությամբ նախատեսել սահմանադրական դատարանի որոշումների վերանայման հնարավորություն²⁰, հատկապես այն որոշումների դեպքում, որոնք ընդունվել են մեկ-երկու ձայնի տարբերությամբ²¹:

Սահմանադրական դատարանի որոշումների վերանայման վերաբերյալ առաջարկները մեզ համար ընդունելի չեն հետևյալ պատճառաբանությամբ: Բ. Էրզենն իրավացիորեն նշում է, որ սահմանադրական դատարանը արդարադատություն է իրականացնում ոչ թե մարդու, այլ իշխանության նկատմամբ²², իսկ, ինչպես հայտնի է, նպատակադրման ոլորտում

¹⁹ Տե՛ս **Ն. Այվազյան**, ՀՀ սահմանադրական արդարադատության բարելավման մի քանի հարցեր // Իրավագիտության հարցեր, 2005, թիվ 1, էջ 31:

²⁰ Տե՛ս **Бойков А. Д.** Третья власть в России. Очерки о правосудии, законности и судебной реформе 1990-1996 гг., М., 1997, էջ 97, **Ефимичев С., Ефимичев П.** Уголовно-процессуальное законодательство и решения Конституционного суда РФ // «Журнал российского права», 2000. http://www.juristlib.ru/book_2111.html (16.05.2005)

²¹ Տե՛ս **Ковтун Н. Н.** Постановления Конституционного Суда РФ по уголовно-процессуальным вопросам: проблемы законодательной техники и практического применения // Государство и право. 2001, № 11, էջ 106:

²² Տե՛ս «Интервью с судьей Конституционного Суда Б. С. Эбзеевым» // «Конституционное право: восточноевропейское обозрение», 1997, № 2 (19), էջ 50:

սահմանադրական դատարանի հիմնական գործառույթը սահմանադրական կայունություն ապահովելն է²³: Այս տեսանկյունից ՀՀ սահմանադրական դատարանի նպատակները կարող են տարբերվել պետական իշխանության այլ մարմինների նպատակներից, ավելին, որոշ դեպքերում ՀՀ սահմանադրական դատարանը, լինելով իշխանության նկատմամբ դատարան, կարող է հակադրվել պետական իշխանության քաղաքականության ուղղություններին: Մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման հնարավորությունը կարող է ընկալվել որպես ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականության վրա հակազդեցության իրավական լծակ, որը հնարավորություն կտա անցումային պետություններում քաղաքական ներգործության և այլ եղանակներով «հարկադրել» վերանայելու այդ որոշումները: Գտնում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանին պետք է զերծ պահել նման հակազդեցությունից:

Անդրադառնանք այն հարցին, թե «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն արդյոք նախատեսո՞ւմ է սահմանադրական դատարանի որոշումների վերանայման հնարավորություն: Թեև ՀՀ սահմանադրական դատարանը 25. 02. 2011 թ. որոշման մեջ հստակ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները իրավաբանական տեսակետից անվիճարկելի են (վերանայման ենթակա չեն), սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 14-րդ մասում նախատեսվում է սահմանադրական դատարանի որոշումների վերանայման հնարավորություն: Նշված նորմի համաձայն՝ սահմանադրական դատարանը իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողության որևէ գործով ընդունված ըստ էության որոշումից առնվազն 7 տարի հետո, սույն օրենքով սահմանված կարգով, ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել իր հիշյալ որոշումը, եթե

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը,

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Կանխավ նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածում խոսվում է ոչ թե իրավական դիրքորոշումների փոփոխության, այլ սահմանադրական դատարանի որոշման վերանայման մասին, որի պատճառով ծագում են մի շարք հարցեր: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի որոշման վերանայման առաջին հիմքը տվյալ գործով կիրառված սահմանադրական նորմի փոփոխությունն է: Նշված հիմքով սահմանադրական դատարանի որոշումը վերանայելու հարցում ընդունելի է Վ. Լազերևի այն կարծիքը, ըստ որի՝ սահմանադրական նորմի կազուալ մեկնաբանության վերաբերյալ որոշումը կիսում է սահմանադրա-

²³ Ст'ю Сергеев Д. Н. Конституционное правосудие в России: политико-правовое исследование. Дисс. ... канд. полит наук. М. 2005, էջ 25:

կան նորմի ճակատագիրը, այսինքն՝ այդ նորմի փոփոխման դեպքում սահմանադրական դատարանի որոշումը փաստացի կորցնում է իր ուժը²⁴: Մեզ համար անընդունելի է սահմանադրական նորմի փոփոխման դեպքում այդ նորմի հիման վրա կայացված որոշման վերանայման հնարավորությունը: Բանն այն է, որ այս դեպքում կարծես հետադարձ ուժ է տրվում Սահմանադրության փոփոխությանը: Սահմանադրության փոփոխման դեպքում սահմանադրական դատարանի նախկինում կայացրած բոլոր որոշումների վերանայումը առաջ կբերի իրավական անորոշություն և կարող է սպառնալ իրավական անվտանգությանը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածում ամրագրված է, որ սույն մասի առաջին պարբերությունում նշված դիմումը չի կարող վերաբերել այն իրավական ակտերին (դրանց առանձին դրույթներին), որոնք սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր: Ստացվում է, որ սահմանադրական դատարանի նախկինում կայացված որոշումը սահմանադրական նորմի փոփոխության հիմքով կարող է վերանայվել, եթե այդ որոշմամբ ամրագրվել է, որ իրավական ակտը համապատասխանում է Սահմանադրությանը: Նշված դրույթի անհրաժեշտությունը դեռևս խոր հետազոտման և վերլուծության կարիք ունի, քանի որ անհասկանալի է, թե օրենսդիրը ինչ նկատառումներից ելնելով է ամրագրել, որ նշված դիմումը չի կարող վերաբերել այն իրավական ակտերին, որոնք սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշման վերանայման երկրորդ հիմքը պայմանավորված է տվյալ գործով Սահմանադրության կիրառված դրույթի ընկալման փոփոխությամբ: Թերևս չենք կարող վիճարկել, որ հանրային կյանքի զարգացմանը զուգահեռ կարող է փոխվել սոցիալ-իրավական արժեհամակարգը, հետևաբար նաև՝ սահմանադրաիրավական նորմերի ընկալումը: Իրավունքը գտնվում է զարգացման վիճակում, որի պայմաններում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխությունը հասկանալի է: Այս իմաստով սահմանադրական դատարանը խստորեն կաշկանդված չէ իր նախկին իրավական դիրքորոշումներով և հանրային կյանքի զարգացմանը զուգընթաց կարող է փոփոխել նախկինում արտահայտած իր դիրքորոշումը:

Կարծում ենք՝ սահմանադրական նորմերի ընկալման փոփոխման դեպքում վերանայվում է ոչ թե սահմանադրական դատարանի նախկինում կայացրած որոշումը, այլ պարզապես նոր քննվող գործով փոփոխվում է սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշումը: Սահմանադրական դատարանի որոշումների և իրավական դիրքորոշումների վերանայման տարբերությունն այն է, որ սահմանադրական դատարանի որոշման վերանայումն առաջ է բերում նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ քաղաքականության փոփոխություն, մինչդեռ սահմանադրական դատարանի իրա-

²⁴ Տե՛ս **Лазарев Л. В.** Правовые позиции Конституционного Суда России. 2003, <http://www.pravoznavec.com.ua/books/letter/89/%CB> (16. 05. 2005).

վական դիրքորոշման վերանայումը նշանակում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը փոխում է նախկինում ձևավորած իր դիրքորոշումը և, պայմանավորված հանրային կյանքի էական փոփոխություններով, նոր գործով վերանայում է սահմանադրական նորմի ընկալումը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող հետադարձ նշանակություն ունենալ:

Այս առումով պետք է համաձայնել այն մոտեցման հետ, ըստ որի՝ նախկինում ձևավորված իրավական դիրքորոշումների շտկումը չի նշանակում նախկինում ընդունված որոշման վերացում և չի հանգեցնում սահմանադրական դատարանի ողջ պրակտիկայի փոփոխությանը: Սահմանադրական դատարանի որոշումները պահպանում են իրավաբանական ուժը և ենթակա չեն փոփոխման²⁵:

Բացի վերը նշվածից՝ պետք է նկատի ունենալ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 14-րդ մասում սահմանված հիմքերով սահմանադրական դատարանի որոշումների վերանայումը գործնականում իրագործելի չէ, քանի որ նշված հոդվածում խոսվում է օրենքով սահմանված կարգով համապատասխան դիմումի հիման վրա նախկինում կայացված որոշումների վերանայման մասին, իսկ օրենքով նախատեսված չէ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման դատավարական ձև: Հարց է ծագում. այս դեպքում դիմողը պահանջելու է յոթ տարի առաջ ընդունված որոշման վերանայում, թե՞ նախկինում վերացական սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսացած նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցի կրկնակի քննարկում: Եթե հիմք ընդունենք այն մոտեցումը, որ սահմանադրական դատարանը վերանայելու է նախկինում կայացրած որոշումը, ապա դրա վերանայման ընթացակարգն օրենքով նախատեսված չէ:

ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման փոփոխությունը պետք է հստակ պատճառաբանվի: ՀՀ սահմանադրական դատարանը պետք է ցույց տա սոցիալական կյանքի և սահմանադրական նորմի ընկալման փոփոխությունը, որով պայմանավորվել է իրավական դիրքորոշման փոփոխությունը: Իրավական դիրքորոշման չպատճառաբանված փոփոխությունը քաղաքական իշխանության, իրավաբանական հանրության և հասարակության կողմից կարող է ընկալվել և գնահատվել որպես կամայականություն²⁶:

Այսպիսով գտնում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 14-րդ մասը պետք է վերախմբագրել և ամրագրել

²⁵ Տե՛ս **Зорькин В. Д.** Прецедентный характер решений Конституционного Суда Российской Федерации // «Журнал российского права», 2004, № 12, էջ 3-9:

²⁶ Օրինակ՝ ՌԴ սահմանադրական դատարանը գիտնականների կողմից քննադատվել է ՌԴ սուբյեկտների գործադիր իշխանության ղեկավարների ձևավորման կարգի փոփոխման հարցում իր դիրքորոշման չպատճառաբանված փոփոխության համար (տե՛ս **Саликов М. С.** Дело «О назначении губернаторов»: критический анализ решения Конституционного Суда РФ. Концептуальные проблемы современного российского судостроительства и судопроизводства. Екатеринбург, 2006, <http://epsn.org.ru/Content/Conferences/Papers2006/2006razd3/Salikov.htm>, (21. 12. 2008), **Халугин С. И.** Правовые позиции Конституционного Суда Российской Федерации по вопросам местного самоуправления. Автореф. ... канд. юрид. наук. Казань, 2006, էջ 17):

ոչ թե որպես սահմանադրական դատարանի որոշումների վերանայման, այլ իրավական դիրքորոշումների փոփոխության մասին իրավանորմ:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ազդեցությունը ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության վրա: Արդարադատական գործունեության ոլորտում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ազդեցությունը պարզելու համար հիմնարար նշանակություն ունի այն հարցադրումը, թե դրանք ինչպիսի իրավական հետևանքներ են առաջացնում ՀՀ ընդհանուր և մասնագիտացված դատարանների համար: Նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն ուղղակի ազդեցություն ունեն ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների վրա, ինչը նախ և առաջ դրսևորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները վկայակոչելու, իր դիրքորոշումները դրանցով հիմնավորելու պրակտիկայով: Ավելին, երբեմն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացրած իրավական դիրքորոշումները փոփոխելու և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին համապատասխանեցնելու հիմք են դառնում: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 07. 12. 2009 թ. ՍԴՈ-844 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, 12. 02. 2010 թ. փոփոխել է Մյասնիկ Ավետիսյանի վերաբերյալ 29. 06. 2009 թ. որոշմամբ ձևավորած դիրքորոշումը և այն համապատասխանեցրել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշմանը:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը ընդհանուր մասնագիտացված դատարանների դատական ակտը վերանայելու իրավական այն լծակն է, որով ՀՀ սահմանադրական դատարանը ազդում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության վրա: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 25. 02. 2011թ. ՍԴՈ-943 որոշման 8-րդ կետում հստակ սահմանել է.

«Քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր՝ սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների կողմից, իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, սահմանադրական դատարանը գնահատում է նաև արդարադատական (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) պրակտիկան, իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն, սահմանադրական դատարանն իր որոշումներով ըստ էության մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում»:

Անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե ՀՀ սահմանադրական դատարանի ակտերը ո՞ր դեպքերում կարող են դառնալ դատական ակտերը

վերանայելու հիմք: Եթե ՀՀ սահմանադրական դատարանը որոշման եզրափակիչ մասում հստակ փաստում է նորմատիվ ակտի հակասահմանադրականությունը, ապա այն անկասկած դառնում է դատական ակտը վերանայելու նոր հանգամանք²⁷: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի կարգով քննվող գործերով կայացված որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ սահմանադրական դատարանը, բացի նորմատիվ-իրավական ակտերը ՀՀ Սահմանադրությանը հակասող կամ համապատասխանող ճանաչելու վերաբերյալ որոշումներից, ընդունել է նաև եզրափակիչ մասից տարբերվող պատճառաբանական մասով որոշումներ, որտեղ փաստվել են, որ՝ 1. օրենքի դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրությանը իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ (այս դեպքում ևս օրենքի դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածների պահանջներին հակասող և անվավեր), 2. օրենքի դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրությանը այնքանով, որքանով դա վերաբերում է որոշակի իրավիճակի, 3. օրենքի դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում: ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներից վերջին երկուսը իրենց բնույթով նման են ՀՀ սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնցով վիճարկվող նորմը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ: Երկու դեպքում էլ օրենքի նորմն ինքնին ունի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող իմաստ, սակայն դատական իշխանության կողմից տրված մեկնաբանությամբ դրա իմաստը փոփոխվել է: Այս է պատճառը, որ վերջին դեպքում ՀՀ սահմանադրական դատարանը ոչ միայն հաստատում է, որ նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, այլ նաև իր իրավական դիրքորոշմամբ սահմանափակում, արգելում է դրա այլ կերպ մեկնաբանումը:

Արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասից տարբերվող իրավական դիրքորոշումը դատական ակտը վերանայելու նոր հանգամանք է, արդյո՞ք նման իրավական դիրքորոշումը կարող է համարվել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության վրա ազդելու իրավական խողովակ: Չանդրադառնալով սույն հարցի վերաբերյալ առկա տեսական բանավեճերին՝ պարզապես փաստենք, որ ՀՀ սահմանադրական դատարանը 25. 02. 2011 թ. ՍԴՈ-943 որոշման 9-րդ կետում հստակ սահմանել է.

«...փաստն այն է, որ դատական պրակտիկան, օրենսդրական առկա ձևակերպումներից ելնելով, նոր հանգամանք չճանաչելով սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը ճանաչվել է սահմանադրական,

²⁷ ՀՀ սահմանադրական դատարանը ընդունել է մի շարք որոշումներ, որոնցով կատարելագործվել են ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերը վերանայելու դատավարական կառուցակարգերը (տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 15. 04. 2008 թ. ՍԴՈ-751, 13. 10. 2009 թ. ՍԴՈ 833, 15. 07. 2011 թ. ՍԴՈ-984 որոշումները):

հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: Երկրորդ՝ փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետևաբար և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը»: Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19, 93 հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Այսպիսով, կարելի է եզրակացնել.

1. ՀՀ սահմանադրական դատարանը արդարադատություն է իրականացնում պետական իշխանության նկատմամբ և հանրային կյանքում նրա իրականացրած դատական քաղաքականությունն ընդգրկում է պետական իշխանության ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ մարմինների գործունեության ոլորտները: ՀՀ սահմանադրական դատարանի քաղաքականության նպատակակետը ոչ միայն օբյեկտիվ իրավունքի, այլև իրավակիրառ, այդ թվում՝ դատական պրակտիկայի սահմանադրականացումն է: ՀՀ սահմանադրական դատարանի ազդեցության դաշտն ընդլայնվել է սահմանադրական դատարանի՝ իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը սահմանադրական կամ հակասահմանադրական ճանաչելու մասին որոշումը որպես դատական ակտը վերանայելու նոր հանգամանք ճանաչելու փաստով:

2. Պետք է տարբերակել ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և իրավական դիրքորոշումների վերանայման հանգամանքները: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ենթակա չեն վերանայման: Հակառակ մոտեցման պարագայում ՀՀ սահմանադրական դատարանի՝ որպես հանրային քաղաքականության սուբյեկտի գործունեությունը կարող է առաջացնել իշխանության մյուս թևերի հակազդեցությունը, իսկ հետսոցիալիստական պետություններում սահմանադրական դատարանի որոշումների վերանայման իրավական գործընթացը կարող է օգտագործվել որպես սահմանադրական դատարանի քաղաքականության վրա ներգործության եղանակ: Ինչ վերաբերում է իրավական դիրքորոշումների վերանայմանը, ապա այն իրավաչափ է, եթե պայմանավորված է օրենքով նախատեսված հանգամանքներով: Այս տեսանկյունից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 14-րդ կետում նախատեսված սահմանադրական դատարանի որոշումների վերանայման ինստիտուտն անհրաժեշտ է փոխարինել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման վերանայման ինստիտուտով:

3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ուղղակիորեն ազդում են ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքականության ուղղությունների վրա, ինչպես նաև կարող են այդ քաղաքականությունը վերանայելու հիմք դառնալ: ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության վրա սահմանադրական դատարանի քաղաքականության ազդեցության իրավական խողովակը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայումն է:

АРТУР ГАМБАРЯН – Роль Конституционного Суда РА в сфере формирования судебной политики. – Конституционный Суд РА осуществляет правосудие в отношении государственной власти, а судебная политика, проводимая им, включает сферы деятельности как правотворческих, так и правоприменительных органов. Цель Конституционного Суда – обеспечить конституционализм не только объективного права, но и правоприменительных органов и судебной практики. Поле его деятельности расширилось, когда он вынес решение о том, что признание той или иной нормы конституционной или неконституционной – это новое обстоятельство для пересмотра судебного акта.

В статье предложено различать обстоятельства пересмотра постановлений и правовых позиций Конституционного Суда. Постановления КС не подлежат пересмотру. В противном случае его деятельность как субъекта общественной политики вызовет противодействие других ветвей власти и будет использоваться как средство воздействия на его политику. Что касается пересмотра правовых позиций, то он правомерен, если обусловлен предусмотренными законом обстоятельствами. В статье предлагается заменить институт пересмотра постановлений Конституционного Суда институтом пересмотра его правовых позиций. При этом следует учесть, что постановления Конституционного Суда непосредственно воздействуют на политику Кассационного Суда РА.

ARTHUR GHAMBARYAN – The Role of the Constitutional Court of RA in the Formation of Judicial Policy. – The author examines the role of the Constitutional Court in the formation of judicial policy. The article notes that the RA Constitutional Court administers justice with respect to state authority. The judicial policy carried by the latter in public life includes both the scope of lawmaking and law enforcement bodies of state power. The ultimate goal of the policy of the RA Constitutional Court is not only the provision of the constitutionality of the objective law, but also of law enforcement bodies and judicial practice. The field of activities of the RA Constitutional Court was increased when the decisions of the above mentioned body, within the legal position, in regard to the constitutionality or non-constitutionality of the norms were recognized as a new fact for the review of the judicial acts.

The author proposes to distinguish the circumstances of the revision of regulations and legal positions of the RA Constitutional Court. Regulations of the RA Constitutional Court can not be revised; otherwise the legal procedure of Constitutional Court regulation review can be used as a measure to influence the state policy, especially in post-socialist countries. With regard to the revision of the legal position, it is legitimate, if due to circumstances stipulated by law. Consequently, the author suggests replacing of the institution of review of Constitutional Court regulations referred to in paragraph 14 of Article 68 of RA Law "On Constitutional Court" with the institution of the review of the Constitutional Court legal positions.

The article notes that the decisions of the RA Constitutional Court directly affect the policy direction of the RA Court of Cassation, as well as serve as a basis for revising the policy.